«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԵՎԱ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՊՄՀ
Էլ. հասցե՝ MnacakanyanEva@mail.ru

DOI: 10.24234/scientific.v1i46.140

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության ենք առել մեծ լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանի՝ կյանքի վերջին տարիներին գրած «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկներին» վեպը՝ անդրադառնալով Աբովյանի մանկավարժական-լուսավորչական հայացքներին, մեթոդաբանությանը, Նոր մտավորականության ձևավորման, նոր ռուսոյա-կանության, մտավորական-մանկավարժի գործունեության հայեցակարգին, վեպի կերպարներին, տիպաբանությանը:

Խ. Աբովյանը, իր մանկավարժական վեպում ստեղծելով Տիգրանի և Աննայի կերպարները, որոնք իրենց երեխաների համար ուսուցիչ են ընտրում բազմահմուտ ու բազմագիտակ Կարապետ Վահանյանին, գրականություն է բերում մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու գործում ծնողների և ուսուցիչների հանձնառության հիմնահարցերը, վեպի կերպարների ու նրանց առջև դրված զանազան խնդիրների միջոցով, գործող պատկերավոր օրինակներով ցույց է տալիս ֆիզիկական, մտավոր, բարոյական դաստիարակության սկզբունքներն ու մեթոդները իր պատկերած իրականության մեջ:

Հոդվածի խնդիրն է բացահայտել ստեղծագործության բովանդակային և գործառութային նշանակությունը 21-րդ դարում կիրարկվող մեթոդների համեմատությամբ: Հոդվածի նպատակն է ընդգծել այն իրողությունը, որ Աբովյանի վեպը այսօր ևս պահպանում է ուսուցողական-ճանաչողական նշանակությունը և հնարավոր է կիրառել անձի զարգացման գործընթացում:

Հոդվածում եկել ենք այն եզրակացության, որ Աբովյանը դեռևս XIX դարի առաջին կեսին հայ իրականության մեջ առաջինն է բերում դասավանդման ինտերակտիվ մեթոդների փոխներգործուն համակարգի էատարրեր, որ XX դ. վերջին ինտերակտիվ ուսուցում անվանումով տիրապետող են դառնում հայկական իրականության կրթահամա-կարգում:

Բանալի բառեր՝ Խ. Աբովյան, Ժ.-Ժ. Ռուսո, Տիգրան, Վահանյան, մանկավարժական վեպ, դաստիարակություն, դասավանդման ինտերակտիվ մեթոդներ, կրթահամակարգ, անձի զարգացում, ազգային վերածնություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության պատմությունը երկարատև որոնումների, զարգացման ու համակարգման բարդ շրջան է անցել: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նոր գրականության սկզբնավորման շրջանը, որ ուղիղ իմաստով կապված է Խ. Աբովյանի գրական-ստեղծաբանական ժառանգության հետ:

Խ. Աբովյանը, իր «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկ-ներին» մանկավարժական վեպում գրականություն է բերում մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործընթացին առնչվող մի շարք հիմնահարցեր: Ընդունված է ասել, որ Աբովյանը, վեպի հիմքում դնելով դաստիարակության ռուսոյականության սկզբունքը, Ժ.-Ժ. Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին» (1762) վեպի նմանողությամբ մի յուրօրինակ ձեռնարկ է ստեղծում՝ տեղայնացնելով այն հայկական իրականության և հայ մանկան հոգեկերտվածքի և աշխարհազգացողության վրա:

Աբովյանը չէր տարանջատում իր լուսավորական-մանկավարժական գործունեությունը հայրենափրկության առաքելությունից և կրթված սերնդի, բարոյական և գիտելիքներով զինված մանկավարժի և ընտանիքի հոր ու մոր կերպարների հետ էր նաև կապում ազգային ինքնաճանաչողության, ազգային նորոգումի և վերածնության իր ծրագրերը: Ավելին. դեռևս 19-րդ դարի կեսին առաջարկում է կրթադաստիարակչական այնպիսի մեթոդներ, որոնք գիտական ձևակերպումներ պետք է ստանային ավելի ուշ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմահայաց քննություն կատարելիս կիրառել ենք ուսումնասիրության մի քանի մեթոդներ՝ պատմահամեմատական, նկարագրական, զուգադրական, վերլուծական:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խ. Աբովյանի մանկավարժական-լուսավորչական հայացքները: Խ. Աբովյանի աշխարհայեցության ձևավորումն սկսվում է դեռևս Էջմիածնում Անտոն եպիսկոպոսին աշակերտելիս, ապա Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի տեսուչ, սիրելի ուսուցիչ Հարություն Ալամդարյանի բարերար ազդեցությամբ: Սակայն նրա աշխարհայացքը վերջնականորեն ձևավորվում է Դորպատում ուսանելու տարիներին. Խ. Աբովյանը բանաձևում է հայրենիքին ու ազգին ծառայելու իր առաքելությունը, բայց «չիք իմ այլ նպատակ առաջի, բայց եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ» (Աբովյան Խ., 1956):

Համաշխարհային տիրույթում առաջնահերթ էր դարձել ազգերի անհատականության բացահայտման օրակարգը, որ պահանջում էր ավանդական ըմբռնումների վերանայում, նոր ժամանակներին համահունչ գաղափարների ընկալում: Հայրենիքը հոգևոր ստրկությունից և խավարամտությունից փրկելու, լուսավորություն տարածելու նպատակին

հետամուտ՝ Աբովյանը յուրացնում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում առկա համաեվրոպական քաղաքակրթության նորությունները՝ սկսած գյուղատնտեսական գիտելիքներից մինչև հացը նոր ձևով թխելը, կիթառ և ստեղնաշարային գործիքներ նվագելը: Համակողմանի գիտելիքներով զինված՝ նվիրյալ հայորդին մտմտում է ազգային մշակույթի նորոգության ու զարգացման տեսագործնական ծրագրեր *(Դորպատյան խանդավառ ծրագրերը, սակայն, բախվելով պահպանողական ուժերի և ցարական ռեժիմի դիմադրությանը, չեն իրականանում):* Նա ոչ միայն հստակ գիտակցում է Եվրոպան Հայաստանից բաժանող սոցիալ-քաղաքական, ազգային-պատմական, հոգևոր-զգացական սահմանները, այլև աստիճանաբար ուրվագծում, թե գաղափարական ընդօրինակելի ուսմունքներն ի՛նչ ճանապարհով պիտի իրականացվեն հայրենի երկրում: «Աբովյանի պատմական ծառայությունն այն է,- գրում է Ս. Սարինյանը,- որ հանդես բերելով սոցիալ-պատմական հանգամանքների մեծ զգացողություն՝ հայկական միտքը դուրս բերեց ավանդական սահմանափակությունից դեպի համաշխարհային քաղաքակրթության հորիզոնները, հայ ժողովրդի զարգացման հեռանկարները համադրեց ընդհանուր մարդկության առաջընթացին, հայկական կյանքը իմաստավորեց սոցիոլոգիական, գեղագիտական, բարոյափիլիսոփայական այնպիսի ուսմունքներով, որոնց հասել էր դարաշրջանի առաջավոր միտքը» (Հայոց գրականության պատմություն, 2015) :

Աբովյանը միանգամայն համոզված է՝ որքան էլ ողբերգական ու ահավրալից են փորձությունները, հալածանքներն ու բռնությունները, այնուամենայնիվ պետական անկախությունը կորցրած հայ ազգը շարունակում է անեղծ պահել «զեկեղեցի իւրեանց և զհաւատ, զլեզու և գրականութիւն», ուստի համաշխարհային պատմության մեջ մնում է իբրև ազնվական ոգի կրող, իմաստասիրական ու գեղարվեստական մեծ արժեքներ ունեցող, բացառիկ ունակությունների տեր մի ժողովուրդ, որը համընթաց կարող է քայլել աշխարհի առաջադեմ ազգերի կողքին և միանգամայն հասու է՝ յուրացնելու գեղարվեստի և լուսավորության ժամանակակից ձևերը: Եվ Աբովյանը՝ իբրև ի վերուստ նախասահմանված առաքյալ, իր ողջ կյանքը նվիրում է սիրելի ժողովրդի մտավոր ու հոգևոր արթնացման ու զարգացման գործին: «Լուսավորության և բանականության դարի մտավոր համապարփակության իսկական ժառանգորդը եղավ Աբովյանը»,- նկատում է Ս. Սարինյանը (Հայոց գրականության պատմություն, 2015):

Աբովյանի առաջադիմական-լուսավորական ըմբռնումներն ու գաղափարները ձևավորվում են նախորդ դարերի մեծ մտածողների[1] ու լուսավորականների (Ռուսո,

[1] «Աբովյանի հետ տեսնվեցա և իրավամբ զարմացա նրա հմտության վրա,- պատմում է մի անհայտ ֆրանսիացի ճանապարհորդ (Աբովյանի այս անհայտ բարեկամը մտերիմ է եղել նաև «Արևմուտք» լրագրի խմբագիր Ստեփան Ոսկանի հետ, որին ուղղված մի նամակում գրել է իր տպավորությունները Աբովյանի մասին: Վերջինիս նվիրված հոդվածում Ոսկանը, առանց հիշատակելու ֆրանսիացի հեղինակի անունը, հաղորդում է այդ տպավորությունները («Արևմուտք», 1859, հմ. 6)):- Գերմանական փիլիսոփայության և գրականության հայացքները նրան այնպես ծանոթ են, որ նույնիսկ եվրոպացին կարող է օգուտ ստանալ նրա կարծիքներից: Շիլլերին անգիր գիտե, Լեսինգի և Լայբնիցի գաղափարները հրաշալի կերպով յուրացրել է և իր ասիական երևակայությամբ նրանց նոր գույն է տվել: Գերմաներեն խոսում է որպես գերմանացի. անտարակույս, այս մարդը պատիվ պիտի բերի հայ գրականությանը: Տարօրինա՛կ երևույթ մարդկային լուսավորության. հայի բերանն արձագանքում է այնպիսի գաղափարների, որոնք մեր մեջ դեռ նոր են տարածվում: Շիլլերի, Լեսինգի գրությունները հաստատվում և լսելի են դառնում Կովկասի լեռներում, երբ դեռ

Պեստալոցցի, Ֆրանկե, Շիլլեր, Լեսինգ, Հերդեր, Հեգել, Լայբնից և այլն) հայացքների հետևությամբ: Ծանոթությունը հատկապես գերմանական փիլիսոփայական գեղագիտության, արվեստի մասին աշխատություններին (մասնավորապես Շիլլերի «Նամակներ մարդու էսթետիկական դաստիարակության մասին» տրակտատին) հիմնավորապես ձևավորում է նրա՝ արվեստի, գրականության քաղաքակրթական դերի ու նշանակության ընկալումը ազգերի մշակույթի նորոգության, զարգացման ու լուսավորության գործում: Վ. Ժուկովսկուն ուղղած նամակում Աբովյանը նշում է, որ ուրիշ ճանապարհով հնարավոր չէ «իսկական կրթության և լուսավորության հասնել, քան գեղեցիկ արհեստների՝ բանաստեղծության, երաժշտության և նկարչության միջոցով» (Աբովյան Խ., 1948): Դրանք ունեն «երկնային, սիրտ ազնվացնող, հմայիչ» ուժ:

Իբրև տեսլական ունենալով իդեալական հասարակության երազանքը՝ Աբովյանը ձևավորում ու առաջադրում է ամբողջական աշխարհայեցության մի տեսություն՝ համադրված «մտավոր բազմակողմանի շառավիղներով»: «Բայց այն, ինչ XVIII դարի լուսավորիչների համար ժամանակին էր, և որը նրանց դարձնում էր զտարյուն լուսավորիչներ, XIX դարի սկզբի հայ լուսավորիչների մոտ հանդես էր գալիս ռոմանտիզմի կերպարանքով՝ որպես հենց այդ ռոմանտիզմի բնորոշ առանձնահատկություն»,- գրում է Սարինյանը (Հայոց գրականության պատմություն, 2015):

Առհասարակ ռոմանտիզմի գաղափարաբանությունը դառնում է ազգային լուսավորության, զարթոնքի հիմք: Աբովյանը, առաջնորդվելով ռոմանտիկական առաջադրույթներով, աշխարհն ու բնությունը ճանաչելու նոր սկզբունքներով, բազմաժանր մի շարք ստեղծագործություններում ոչ միայն զարգացնում է սեփական հողում կեցության ու մտածողության նոր սերմեր աճեցնելու գաղափարը, այլև դառնում այդ գաղափարի իրականացման ուղենշող ջահակիրը:

Աբովյանի լուսավորական-գեղագիտական հայացքներից առթում են նրա մանկավարժական ըմբռնումները, մոտեցումներն ու մեթոդները, որոնք ամբողջովին նոր խոսք էին մատաղ սերնդի դաստիարակության ու կրթության[2] համակարգում: «Այն ժամանակ, երբ շարունակում էր իշխել միջնադարյան տիպի դպրոցը, որն իր կրթական սխոլաստիկ եղանակներով, կրոնական դոգմաներով սպանում էր մանկան մեջ ինքնուրույնությունը, սերը դեպի գիրքը, կյանքի ճանաչողությունը, բնությունը,- գրում է Ռուբեն Զարյանը,- Աբովյանն առաջինը եղավ, որ առաջ քաշեց Հայաստանի դպրոցները հիմնիվեր փոխելու[3] հանդուգն ծրագիրը» (Զարյան Ռ., 1939):

Եվրոպայում ժողովուրդ կա, որ այս հեղինակների անունն անգամ չի լսել: Զարմանալի բան պիտի լինի, եթե Ասիայի լուսավորությունը Կովկասից սկսի, և Պրոմեթեոսի ժայռը տեսնի իր չարչարանքի արդյունքը» (Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, 1941):

[2] «Կրթության գործի զարգացման և հաջողության համար Աբովյանը պահանջում է երեք հիմնական բան,- գրում է Ս. Խուդոյանը.- ա)իրենց մասնագիտությունը սիրող, եռանդով աշխատող, կրթված հմուտ ուսուցիչներ, բ) դպրոցների լայն ցանց՝ պարտադիր ուսուցման կիրառմամբ և գ)ամենահիմնականը՝ մանուկներին հասկանալի աշխարհաբար գրական լեզու» (Ս. Խուդոյան 1941):

[3] Գերմանացի հայտնի բուսաբան ու ճանապարհորդ Կարլ Կոխը, Կովկասում և Հայաստանում կատարած գիտական ուղևորությունների ընթացքում հանդիպելով Աբովյանին, գրում է. «Հնարավոր է, որ այս կամ այն հարցում նա շեղվում է ժողովրդական կրթության բնագավառում պետության նախգծած ուղիից, քանի որ արտաքին ձևականությունը չէր գոհացնում նրա դեպի վեր սավառնող հոգին... բայց անկասկած, մինչև հիմա

Մանկավարժական գործունեությամբ[4], դասագրքերով («Նախաշավիղ կրթության»[5], «Նոր տեսական և գործնական քերականութիւն ռուսաց վասն հայոց», «Պատմություն հին դարուց» «Ամերիկա լիս քցիլը»), երկերով, հոդվածներով, նամակներով ու գրություններով Աբովյանն ամբողջացնում է իր մանկավարժական-լուսավորական հայացքները: Առաջադրում է համընդհանուր գրագիտության խնդիրը, որ պետք է իրագործվեր ժողովրդական դպրոցների միջոցով և կիրթ ու լուսավորված ուսուցիչների անխոնջ ջանքերով, առաջարկում է ուսուցումը աղերսել մանուկների առօրյա կյանքին, համապատասխանեցնել նրա հոգեկան և մտածական կարողություններին և ժամանակի պահանջներին, իրականացնել ոչ թե սխոլաստիկ օրենքներով ու գրաբարով, այլ կենդանի աշխարհաբարով, զննական միջոցներով, դասավանդման նորագույն մեթոդներով: Իսկ գեղեցիկ արվեստները, հատկապես երաժշտությունն ու նկարչությունը՝ իբրև անհատի հոգևոր վերափոխման կարևորագույն միջոց, դարձնել պարտադիր բոլորի համար: Աբովյանի մանկավարժական, կրթադաստիարակչական, բարոյական, գեղագիտական հայացքների ամբողջական արտահայտություն է «Պատմություն Տիգրանի...» ուսուցողական-խրատական վեպը:

«Պատմություն Տիգրանի...» վեպի քննություն: «Տիգրանի պատմությունը...» [6] դիդակտիկ-լուսավորական վեպ է՝ ժանրի առաջին նախօրինակը հայ գրականության մեջ (մնացել է անավարտ): Այն բաղկացած է երեսունհինգ գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը մի փոքրիկ նովել է կամ զրույց-պատում հայկական ազգային-ավանդական ընտանիքի շրջանակում: Աբովյանը Ժ.-Ժ. Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին» վեպի համաբանությամբ ստեղծում է մանուկների դաստիարակության մի ուսուցարան: «Ինչպես Ռուսոն Էմիլից և նրա ապագա կնոջից՝ Սոֆիից նոր հասարակության բջիջն է ստեղծում,-

---

Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այդպիսի սիրով ու այնպիսի զոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն է... Եթե Աբովյանը, որպես Երևանի գավառական դպրոցի տեսուչ, կարողանա մնալ իր գործունեության ներկա շրջանի մեջ, եթե նրան գործուն աջակցություն ցույց տան իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի է, որ Երևանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով ստնահարված հայ ժողովրդի համար» (Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, 1941):

[4] Դեռևս դորպատյան տարիներին Աբովյանը նպատակ ուներ Հայաստանում ստեղծելու գիտական միաբանություն՝ դպրոցով ու տպարանով, հավաքելու մանուկների, կրթելու ու դաստիարակելու նրանց, ապա իբրև ուսուցիչ-քահանա ուղարկելու գյուղերն ու քաղաքները: Ծրագրել էր հիմնել նաև երեք կարգի դպրոց՝ քահանայացուների, աղքատ ու որբ երեխաների և ունևոր դասի ու վաճառականների զավակների համար: 1836-ին ավարտելով Դորպատի համալսարանը՝ Աբովյանը վերադառնում է հայրենիք: Նրա բոլոր ջանքերը՝ իրագործելու ծրագրված երազանքները, անցնում են ապարդյուն: 1837-ի սկզբներից աշխատանքի է անցնում Թիֆլիսում՝ որպես գավառական դպրոցի տեսուչ և պատմության ու թվաբանության ուսուցիչ: Որոշ ժամանակ անց բացում է իր մասնավոր դպրոցը, որի հիմնական նպատակը առաջադեմ ուսուցիչներ պատրաստելն էր: 1843 թ. նա տեսուչի պաշտոն է ստանձնում Երևանի գավառական դպրոցում, որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջը:

[5] Աբովյանի մանկավարժական գլխավոր երկն է՝ հայ իրականության մեջ հնչական եղանակով կազմված առաջին դասագիրքը, որում արտացոլվում են Աբովյանի մանկավարժական հայացքներն ու սկզբունքները: «Նախաշավիղ կրթության»-ը գրողի կենդանության օրոք տպագրված միակ երկն է, որի գործածությունը, սակայն, արգելվել է:

[6] Գրականագիտության մեջ կա տեսակետ, ըստ որի՝ վեպը «միջգիտակարգային ստեղծագործություն է՝ կանգնած մանկավարժական և մանկական գրականությունների հատման կետում, ինչն էլ հնարավորություն է տալիս ընթերցելու այն երկակի մոտեցմամբ» (Ն. Մուրադյան, 1979, Ա. Սողոյան, 2019): Մենք այս տեսակետին մոտենում ենք վերապահումով:

գրում է Հ. Մուրադյանը,- այնպես էլ Աբովյանը Վարդանից, Եղիսաբեթից և Ստեփանից պատրաստում է նոր հասարակության օրինակելի քաղաքացիներ» (Մուրադյան Հ., 1963): Օրինակելի, առաջադիմական հայացքներով հայրենանվեր քաղաքացի կերտելը Աբովյանի կարևորագույն նպատակներից էր, որի իրագործմանը պետք է նպաստեին համապատասխան միջավայրն ու ճիշտ և ուղղորդված դաստիարակությունը: «Երեխան ծնվելու րոպեից արդեն ոչ թե դաստիարակի, այլ բնության աշակերտն է,- նշում է Ռուսոն.- դաստիարակը սոսկ ուսումնասիրում է նրան այս առաջին ուսուցչի ձեռքի տակ և հետևում, որ ապարդյուն չանցնի բնության հոգածությունը» (Ռուսո Ժ.-Ժ., 1960): Աբովյանը, ընդունելով հանդերձ Ռուսոյի դրույթը, թե դաստիարակության հիմնական սկզբունքը համապատասխանությունն է բնությանը, այնուամենայնիվ առաջադրում է այն միտք, որ յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է նպատակաուղղված դաստիարակություն. ինքնահոսի թողնված, տարերայնորեն ընթացող մարդը չի կարող ունենալ ներդաշնակ զարգացում: Վեպում Աբովյանը կյանքի է կոչում իդեալական դաստիարակության ու կրթության վերաբերյալ իր պատկերացումներն ու գործնական կարողությունները՝ առաջարկելով վաղ ռոմանտիզմի սոցիալական աշխարհայեցությանը հատուկ իդեալական կերպարների մի խումբ՝ ի դեմս Տիգրանի, Աննայի և ուսուցիչ Կարապետ Վահանյանի: Վեպի երեսունհինգ գլուխներում հերոսների բազմազան ու բազմաթիվ հարաբերությունների զարգացումներում Աբովյանը ձևակերպում և առաջադրում է կրթադաստիարակչական նոր դրույթների հիմնարար սկզբունքներ, որոնք միտված են հայ ժողովրդի ապագա սերունդների դաստիարակությանը: Վեպի սյուժեն իր ենթասյուժետային բազմաթիվ հոսքերով զարգանում է գաղափարական երեք հիմնական դրույթների բացահայտման ու հաստատման շրջանակում.

1. հայրենիքի լուսավոր ապագայի համար առաջնային են հայ մանուկների ֆիզիկական, աշխատանքային, մտավոր, բարոյական դաստիարակությունն ու կրթությունը,

2. բացառիկ է վերոբերյալ կարևորագույն առաքելության հիմնական կրողների՝ ուսուցիչների և ծնողների դերը, հայ մայրերի անփոխարինելի ազդեցությունը,

3. գործընթացի նպատակային ու ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է ներգործուն մեթոդների ճիշտ ընտրություն, նպատակային կիրարկում և համապատասխան միջավայր:

Կրթադաստիարակչական հիշյալ դրույթները վեպին մանկավարժական ուղղվածություն են տալիս և, ինչպես արդեն նկատեցինք, դնում են Ռուսոյի վեպի կողքին: Սակայն «Պատմություն Տիգրանի...»-ն գեղարվեստական հատկանիշներով բարձր է վերջինից: «Տրակտատը, հրապարակախոսական քարոզը խեղդել է վեպի ժանրը Ռուսսոյի մոտ և հնարավորություն չի տվել ոչ վիպականի, ոչ էլ կերպարի ստեղծման...,- գրում է Ս. Բազյանը:- Աբովյանի վեպը, այնինչ, հարուստ է վիպական տարրերով: Ունի վիպական ուրույն սյուժե, որը թեև դաստիարակության բազմազան հարցերի համեմատ մշակված դեպքերի, էպիզոդների կապակցություն է, բայց զարգանում է հերոսների փոխհարաբերությունների կենդանի ընթացքով» (Բազյան Ս., 1966):

Վեպի գաղափարական հերոսը Տիգրանն է՝ առաքինության մարմնացում, խելացի, նվիրված, խաղաղարար, աշխատասեր, գթառատ, բարի, կարեկցող, որի «սիրտն ու հոգին էնքան իր համար չէր հոքս քաշում, ինչքան ուրիշի համար» (Աբովյան Խ., 1947): Վեպի առաջին իսկ տողերից Աբովյանը ներկայացնում է հայկական ավանդական ընտանիքի իդեալական պատկերը, որտեղ գերակա են փոխադարձ հարգանքը, սերը, ըմբռնումը: Ե՛վ Տիգրանը, և՛ Աննան մեծագույն պատասխանատվությամբ են իրականացում ծնողի՝ իբրև առաջին դաստիարակողի պարտականությունները. առանց մարմնական պատիժների, երեխայի ինքնասիրությունը վիրավորող միջոցների, կշռադատված հետևողականությամբ և անձնական վարքագծով են դաստիարակում իրենց զավակներին՝ նրանց մեջ զարգացնելով բարոյական բարձր հատկանիշներ: Ահա Տիգրանը կնոջ՝ Աննայի[7] հետ դիտում է երեխաների խաղաղ քունը և թախծորեն մտորում, թե ով գիտե «քանի, քանի ողորմելի երեխեք էս սհաթիս տանջվում կըլին, որը ցավի ձեռիցը, որը անտերությունից» (Աբովյան Խ., 1947): Եվ իբրև բարեպաշտ հավատացյալ՝ աղոթում է ամենակարողին, թե «Գոհ եմ Քեզանից, Արարիչ Աստված, դու սրանց անմեղ օրը էսպես միշտ պահես ու մեզ էլ կարողություն տաս, որ Քո ճամփիցը դուրս չի գանք» (Աբովյան Խ., 1947): Խաղաղ ու հոգեպարար այս դրությանը հաջորդում է հրդեհի հանկարծակի բռնկումը, որ դառնում է սյուժեի հանգույցը և գործողությունների զարգացման սկիզբը: Մինչ Տիգրանը ուշքի կգար անակնկալ հրդեհի խուճապից, անսապասելի հայտնվում են մարդիկ, որոնք երախտապարտ նվիրումով ու ջանքերով կանխում են վերահաս դժբախտությունը: Նրանց մեջ առանձնանում է Դիվանբեգի Մարտիրոսը, որի անձնազոհությունը անսահման էր: Այս ամենի ականատես երեխաները ստանում են իրենց առաջին դասը՝ կարգապահություն, անձնազոհություն, այլ մարդկանց նկատմամբ կարեկցանք, ֆիզիկական կոփվածություն:

Աղետալի իրադարձությանը հետևում է երկրորդ դիպվածը, որ բարոյականության հաջորդ դասն էր: Տիգրանը հարազատներին հայտնում է, որ կորցրել է 300 ոսկին, որ պետք է հանձներ ապահովագրության ընկերության: Բայց ընտանիքի տրտմությունը փարատելու, հոգեբանական ծանրությունը հեռացնելու համար շտապում է հավաստիացնել, որ եղածը եղել է, և այն, ինչ ունի, շատ ավելին է: «Մկամ, իմ սիրելի, իմ ազիզ որդիքն ու կնիկը ի՞նձ մոտ չեն,- ասում է նա:- Իմ արդարութունը, իմ բարի անունը հո չեմ կորցրել... Ինչ որ չենք կորցրել, նրա վրա ուրախանանք ու սիրտներս լեն պահենք» (Աբովյան Խ., 1947): Տիգրանի կենսափիլիսոփայական մեկնաբանությունից շատ չանցած՝ հայտնվում է անծանոթ մեկը և նրանց վերադարձնում իր գտած 300 ոսկին: Դիպվածը դառնում է վեպի հանգուցային երկրորդ օղակը՝ զարկ տալով գործողությունների նոր զարգացումներին: Երիտասարդ Կարապետ Վահանյանը, որ այդ պահին իր ապրուստը հայթայթելու համար որոնում էր մասնավոր դասեր, հանձն է առնում Տիգրանի երեխաների կրթությունն ու դաստիարակությունը: Շուտով նրանց միանում է նաև Դիվանբեգի Մարտիրոսի Ստեփան որդին, որը մոր մահից հետո դարձել էր անկարգ, ծույլ, կռվարար:

[7] Աննա անունն է կրում նաև շվեյցարացի մանկավարժ-դեմոկրատ, նախնական ուսուցման դիդակտիկայի հիմնադիրներից Յոհան Հայնրիխ Պեստալոցցի կինը, որը մանկավարժական տարատեսակ աշխատանքներ իրականացնելու գործում ամուսնու միակ օգնականն էր:

Այսպիսով, վեպի գաղափարակիր երկրորդ հերոսի՝ Կարապետ Վահանյանի ուսուցողական «ծրագրով» սկիզբ է առնում երեխաների բարոյակրթական դասագործընթացը[8]: Վեպի յուրաքանչյուր դրվագ-էտյուդը մի փակ շրջանակ է՝ մեկ ենթագաղափարի ցուցիչ, որ, փոխհաջորդելով միմյանց, ծառայում է վեպի գերակա գաղափարի բացահայտմանը: Ձևավորվում է շրջան-շրջանի մեջ (կամ ժանր ժանրի մեջ), երբեմն էլ եռաշրջան կոմպոզիցիոն կառույցը. հիմնական պատումը ներառում է գործառութային կոնկրետ նշանակություններ ունեցող տարաժանր ներդիր պատումներ: «Վեպի գլխավոր սյուժետային գծին զուգահեռ,- նկատում է Հ. Մուրադյանը,- Աբովյանը ստեղծում է բազմաթիվ փոքրիկ նովելներ, առակաձև պատմվածքներ, խրատական զրույցներ, որոնք, միանգամայն ինքնուրույն ու ամբողջական գործեր լինելով, վարպետորեն տեղադրվում են վեպի մեջ իբրև նրա անհրաժեշտ մասերը» (Մուրադյան Հ., 1963):

Յուրաքանչյուր պատում կերպարների փոխառնչությունների կենդանի ու բաց շղթա է՝ լի դրամատիկական սեռին բնորոշ երկխոսություններով: Կարապետ Վահանյանը զարմանալի հմտությամբ, փոխհյուսելով ու փոխլրացնելով է իրականացնում կրթելու և դաստիարակելու աշխատանքները: Նա երեխաների հետ առնչվում է սիրով և հարգանքով. չի հրամայում, չի պատժում, զերծ է մնում բարոյախրատական սառը քարոզներից. նա բացատրում է, մեկնաբանում, սեփական օրինակով ցուցադրում, և երեխաները հետևողականորեն ու հետաքրքրությամբ անում են իրենցից ակնկալվողը: Ուսուցիչը համոզված է՝ գիտելիքն սկսվում է զգայական ընկալումից և պատկերացումների մշակման միջոցով հասնում է գաղափարների մակարդակին, որոնք առկա են մարդկային գիտակցության մեջ իբրև ձևավորող ուժեր:

Վարքաբանական զրույցները լրացվում են նաև աշխարհի իմացության, ճանաչողության անհրաժեշտ գիտելիքներով, բնագիտական և աշխարհագրական զանազան տեղեկություններով: Մանկավարժ գրողը համոզված էր, որ հայրենի բնաշխարհի ճանաչողությունից[9] է ձևավորվում նաև հայրենասիրությունը: Այսպես,

---

[8] Այն հարցին, թե Աբովյանը Կարապետ Վահանյանին ինչո՞ւ է հանձնում միայն երկու-երեք երեխա, մի՞թե նա կողմնակից է տնային մասնավոր դպրոցներին, Ս. Խուդոյանը պատասխանում է. «Այս հարցին պետք է բացասական պատասխան տալ: Աբովյանը չէր բացասում դպրոցը: Ավելին, նա դպրոցի ջերմ պաշտպանն էր, բայց ոչ իր ժամանակվա դպրոցի, որտեղ կրթության ու դաստիարակության գործը գլխիվայր էր դրված: Աբովյանի նպատակն էր ցույց տալ կրթության և դաստիարակության այն դրական եղանակը, որը պետք է իրականացվեր ընտանիքի և դպրոցի միասնական ու ներդաշնակ աշխատանքով: Որպեսզի այդ հնարավոր լինի, պետք է ընտանիքները կանգնած լինեն զարգացման այն աստիճանի վրա, որի վրա գտնվում էր Տիգրանի ընտանիքը, հարկավոր էր, որ դպրոցում դասավանդող ուսուցիչներն այնքան զարգացած լինեին, որպիսին Կարապետ Վահանյանն էր, այնպիսի դրական գիտելիքներ և մանկավարժական ձիրք ունենան, ինչպես նա ուներ: Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական եղանակների նման ներդաշնակությունն այն ժամանակ մասսայական կերպով հանդես գալ չէր կարող: Ահա թե ինչու Աբովյանը վերցնում է ավելի ոքր շրջանակ, ցույց տալու համար, թե առհասարակ ինչպես պետք է կազմակերպել դաստիարակության գործը տանը և դպրոցում» (Խուդոյան Ս., 1941):

[9]Հայրենաճանաչողությունը, ըստ Աբովյանի, հայրենասիրության ձևավորման կարևորագույն դրույթներից է: «Առ բարեսնունդ եւ սիրելի աշակերտս իմ» (1838) ուղեգրության (այն ունի նամակի բնույթ, 1838 թ. սենատոր Պ. Հաանի հետ Թիֆլիսից Հայաստան կատարած ճանապարհորդության մասին է) մեջ Աբովյանը խոսքն ուղղում է Թիֆլիսի գավառական դպրոցի իր աշակերտներին: Մեծ մանկավարժը պատմական և աշխարհագրական գիտելիքներ է հաղորդում աշակերտներին, ծանոթացնում այն վայրերին, որտեղ իրենք եղել են: Նկարագրում է տեղադրությունը, կլիման, բնությունը, մարդկանց, նրանց զբաղմունքը և այլն:

Վահանյանը կենդանաբանություն կամ բուսաբանություն ուսումնասիրելիս ուսուցումը սկսում էր երեխաների ծանոթ և բնության մեջ հաճախ հանդիպող կենդանիներից ու թռչուններից, ավելին, նրանք երբեմն դասերն անցկացնում էին բնության գրկում. նախօրոք գնում են մոտակա դաշտեր, հավաքում բույսերի զանազան տեսակներ, ապա ուսումնասիրում նրանց հատկանիշները, տեսակները և այլն: Հայրենի երկրի բնաշխարհի ծանոթացումից հետո ուսուցիչը առաջարկում էր ճանաչել նաև այլ երկրիների կենդանական ու բուսական աշխարհին[10]: Նույն սկզբունքը գործում է նաև աշխարհագրություն ուսումնասիրելիս. հաճախադեպ կազմակերպվում են էքսկուրսիաներ, որոնց ժամանակ առաջնային է դառնում զննականության մեթոդը. դիտողականությամբ երեխան ավելի հեշտ է մտապահում տեսածը: Իսկ թվաբանությունը սովորում են գործնական հաշվումների և իրերի կիրառման միջոցով: Ուսուցիչ Վահանյանը մեծ տեղ է տալիս նաև կրկնությանն ու ընդօրինակմանը:

Աբովյանը խուսափում է հեղինակային միջամտություններից՝ նախընտրելով դրվագ առ դրվագ ցուցադրել կրթական, դաստիարակչական, ճանաչողական, բարոյաարժեբանական գիտելիքներ պարունակող պատմություններ, զրույցներ, հակասական իրավիճակներ, որոնցում երբեմն փոխվում են իրադարձությունների ու դեպքերի մասնակիցները, պատմողները, գլխավոր ու երկրորդական հերոսները, սակայն դրանք ուղղակի կամ միջնորդավորված առնչվում են վեպի փոքրիկ հերոսներին, իսկ արարքների գնահատականները՝ առաքինի կամ անբարո, ազնիվ կամ ստոր, ի վերջո ձևակերպվում են ուսուցիչ Վահանյանի, Տիգրանի կամ Աննայի մեկնաբանությամբ, խրատաբանական զրույցներով, գործողությունների ցուցադրությամբ: Ընդգծվում է ոչ միայն աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-երեխա, ուսուցիչ-ծնող մասնավոր փոխառնչությունների, այլև երեխա-ծնող-ուսուցիչ-բնություն-հասարակական միջավայր անտրոհելի կապի կարևորությունը: Արդյունքը տեսանելի է, երբ դաստիարակությունն ու կրթությունը երեխայակենտրոն է, ու գործընթացին հավասարապես մասնակցում են շահագրգիռ բոլոր կողմերը՝ ապահովելով համապատասխան բնական միջավայր: Վեպում մեծապես կարևորվում են ֆիզիկական, աշխատանքային, բարոյական, ազգային դաստիարակությունը, մտավոր կրթությունը, որի հիմքում պետք է դրվեն իրական գիտելիքներ, և որոնց միջոցով հնարավոր է զարգացնել մարդու մտածողությունը, հիշողութունը, երևակայությունը, դատողություն անելու կարողությունը: Աստիճանաբար կարգավորվում է երեխաների վարքը՝ ձևակերպվում կատարյալ անհատի բարոյական հատկանիշները՝ ամեն ինչում լինել չափավոր, զերծ մնալ ագահությունից ու շատակերությունից, լինել առատաձեռն, բայց ոչ վատնող, ունեցածից մաս հանել չունևորներին, սրբորեն պահպանել «լսած խորհուրդն ու խոսքը», լինել երախտագետ,

[10] Հայտնի է, որ մանկավարժության մի շարք հարցերի գիտական և սպառիչ վերլուծությունը տվել է չեխ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին: «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ նա քննարանում է ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը և այլ հարցեր (*Կոմենսկի* Յ.Ա., *1962)*: Հետագայում դրանք զարգացրել են եվրոպական այլ մանկավարժներ: Աբովյանը, սակայն, առաջինն էր, որ հայ հետամնաց ու խավար իրականություն է բերում դասավանդման առաջադեմ մեթոդներ ու սկզբունքներ, մեծապես կարևորում երեխայի բնական ձգտումներն, կարողություններն ու հետաքրքրությունները:

ծնողասեր, համբերատար, կրել պատասխանատվություն սեփական քայլերի համար, առանց ճշմարտությունն իմանալու՝ չմեղադրել մարդուն՝ առաջնորդվելով այլոց կարծիքով, մարդուն գնահատել ներքին արժանիքներով, հարգել վերջինիս արժանապատվությունը, անկախ նրանից՝ տե՞ր է, թե՞ ծառա: Քանզի «նոքար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի թե ղարիբ, քոռ ըլի, կամ քաչալ, կամ չոլախ... ով նրանց մեկ պակաս խոսք ասի, իմացի՛ր, որ նրանում ո՛չ մարդություն կա, ո՛չ հոգի, ո՛չ հավատ» (Աբովյան Խ., 1947):

Բարոյական դաստիարակության գործում ուսուցիչը տեղ է տալիս երեխայի անձնական փորձին: Նա պետք է շփվի իր տարեկիցների և առհասարակ մարդկանց հետ և սոցիալական տարբեր հարաբերությունների մթնոլորտում ձեռք բերի բարոյական փորձ, մարդասիրություն: Այս տեսանկյունից ուշագրավ է Ստեփանի հետ հարաբերութունները կարգավորելու, նրան վերափոխելու գործընթացը: Ուսուցիչը Վարդանին և Եղիսաբեթին խորհուրդ է տալիս կամակոր ու անկարգ տղային դաստիարակել բարի օրինակով. «Դուք պետք է նրան բարի օրինակ տաք, էնպես պետք է նրա հետ վարվիք, ինչպես կուզեք, որ Ստեփան ձեզ հետ վարվի... ու նրա պակասությունը երեսովը չտաք, համբերեք, տանեք: Միշտ բարի բանից հետը խոսաք...» (Աբովյան Խ., 1947): Ուսուցչի խորհրդի հիմքում Աբովյանը դնում է երկու անբեկանելի ճշմարտություններ. ա) Հիսուսի սովորեցրած վարքի կանոններից մեկը. ըստ որի՝ իր հայտնի Լեռան քարոզում Հիսուսն ասում է. «Այն, ինչ ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնը դուք արեք նրանց» (Մատթեոս 7:12; Ղուկաս 6:31) և բ)Ռուսոյի այն միտքը, թե. «Ձեր բոլոր դասերը տվեք օրինակներով և վստահ եղեք արդյունքին» (Ռուսո Ժ.-Ժ., 1960): Ստեփանի բարոյական վարքագծի ձևավորման գործում դրական ու բարի օրինակը իրապես տալիս է իր արդյունքը. տղան աստիճանաբար վերափոխվում է: Անձնական օրինակով դաստիարակելու դրույթը առկա է վեպի գրեթե բոլոր հատվածներում: «Իրավունք չի՛, որ ես ուրըշիցը էն բանը պահանջեմ, ինչ որ ինքս չեմ անիլ» (Աբովյան Խ., 1947),- ասում է Տիգրանը Վարդանին: Մեկ այլ առիթով նա վաճառականի տղային խրատում է. «Մտքումդ պահիր, որ մյուս անգամ էլ վատ օրինակ չտաս ուրըշին: Դու ինքդ լավ տեսնում ես, թե վատ օրինակիցը ինչքան վնաս է առաջանում: Քոսի, հարընքի, մահտարաժամի նման բան ա վատ օրինակը, ով մոտենա, կդիպչի, նրան էլ կապականի» (Աբովյան Խ., 1947):

Վերջապես, լուսավոր ու կրթված միտքը մարդուն ձերբազատում է սնահավատությունից, խավարամտությունից:

Բլյումի տաքսոնոմիայի սաղմերը «Տիգրանի պատմությունը...» վեպում: Հայտնի է, որ Աբովյանը, ի տարբերություն ժամանակի ուսուցման կաղապարային ձևերի, առաջադրում և կիրառում է դասավանդման միանգամայն նոր եղանակներ: «Աբովյանից առաջ, ինչպես և Աբովյանի ժամանակ, մի ամբողջ անջրպետ գոյություն ուներ ուսուցման մեթոդների և երեխայի մտավոր զարգացման ու կարողությունների միջև,- գրում է Ս. Խուդոյանը:- Երեխան ճնշված էր: Ոչ ոք հաշվի չէր առնում նրա ֆիզիկական և մտավոր զարգացման աստիճանը: Ուսուցման բովանդակությունն ու դասավանդման մեթոդները և երեխայի զարգացումը գտնվում էին հակադիր բևեռներում» (Խուդոյան Ս., 1941): Աբովյանը պահանջում է ուսուցումն իրականացնել երեխաների տարիքային, հոգեբանական

առանձնահատկություններին համահունչ՝ հաշվի առնելով նրա մտավոր և ֆիզիկական զարգացման աստիճանը, «բնական ձգտումները»: Ավելին, ապահովել դասավանդման աստիճանականությունն ու փոխհաջորդայնությունը՝ կիրառելով թե՛ խոսքային, թե՛ գործնական, թե՛ զննական մեթոդները: Վարդանի, Եղիսաբեթի, Ստեփանի ուսուցման գործընթացը մանկավարժական տեսանկյունից հաճախ ներառում է շղթայական քայլերի ուշագրավ հաջորդականություն: Մինչև ցանկալի արդյունքի հասնելը երեխաները անցնում են որոշակի փուլերով

ա. ուսուցչից կամ ծնողներից նախնական գիտելիքներ են ստանում, երբ հայտնվում են անծանոթ, հակասական կամ բարդ իրավիճակներում,

բ. ուշադիր, երբեմն հարցադրումներով լսելով ուսուցիչ Կարապետյանի (ծնողների) մեկնաբանություն-պատմությունը (այն կարող է լինել առանձին փոքրիկ պատում, հիշողություն, առակ և այլն)՝ երեխաները ընկալում են լսածը և քննարկելով միմյանց հետ (նաև ծնողների ու ուսուցչի հետ)՝ փորձում ստացած գիտելիքը կիրառել

գ. երեխաներն անցնում են բուն գործողությունների՝ իմացածը հաստատելու կամ ժխտելու համար,

դ. Գործողությունների զարգացման ընթացքում հերոսներն աստիճանաբար որոշակի հետևություններ են անում իրենց հետաքրքրող առարկայի, երևույթի վերաբերյալ, կամ պարզում, որ նախնական պատկերացումները բոլորովին այլ էին

ե. համադրելով տեսական գիտելիքներն ու գործնական քայլերը՝ երեխաները կանխատեսում են վերջնարդյունքը

զ. Վեպի փոքրիկ հերոսները արդեն ունեն փորձառություն. տեսական ու գործնական ընկալման միջոցով հասել են ցանկալի արդյունքի և արժանացել բարձր գնահատության:

Ներկայացված փուլաշարը մասնակի փոփոխություններով կրկնվում է վեպի մի շարք պատումներում՝ ներկայացնելով տեսնել-ճանաչել-ընկալել-վերլուծել-համադրել-գնահատել տեսագործնական շղթան: Փաստացիորեն Աբովյանը XIX դարի 40-ական թթ. առաջարկում է յուրաքանչյուր միջավայրում ուսուցումը և դաստիարակությունը սկսել ամենացածր մակարդակից և քայլ առ քայլ զարգացնելով յուրաքանչյուր երեխայի հնարավորությունների և ընդունակությունների բնական նախադրյալները՝ ապահովել փոխհաջորդող աստիճանակարգումը՝ հասնելու ուսուցման բարձր մակարդակների: Այս տեսանկյունից Աբովյանի՝ կառուցվածքով ու բովանդակությամբ առանձնահատուկ այս վեպ-ուսուցարանը հիշեցնում է մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգումներից Բլումի տաքսոնոմիան: Ամերիկացի հայտնի մանկավարժ, հոգեբան, գիտնական, կրթության փորձագետ Բենջամին Բլումը 1956 թ. առաջարկում է հիշյալ աստիճանակարգումը՝ սովորողի առաջընթացն ու ուսուցման վերջնարդյունքը գնահատելու համար: Երկարամյա մանկավարժական գործունեության ընթացքում Բլումը եկել էր մի եզրահանգման, որ «այն, ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը: Ամեն ինչ կախված է նախորդ և ներկա ուսուցման պայմաններից և միջավայրից» (https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy):

Ըստ Բլումի՝ ցանկացած կրթական խնդիր առնչվում է հոգեբանության երեք ոլորտներից մեկին՝ ճանաչողական, հուզական և հոգեշարժողական: Ճանաչողությունը կապված է գիտակցության, գաղափարների, հասկացությունների ընկալման հետ: Հուզականությունը վերաբերում է ուսուցման միջոցով ձեռք բերած հույզերին և վարքագծին: Հոգեշարժողական ոլորտն առնչվում է վարքին, ֆիզիկական հմտություններին (https://hy.wikipedia.org/wiki): Վեպի հերոսները ևս տարբեր իրավիճակներում ծառացած խնդիրներին բախվելիս առնչվում են հիշյալ ոլորտներին: Ճանաչել-ընկալել-կիրառել հիմնային գործողությունների հաջորդայնությամբ ապահովվում է երեխաների կրթադաստիարակչական գործընթացը: Ժամանակակից կրթական համակարգում Բլումի տաքսոնոմիան, որի սաղմերը տեսնում ենք վեպի էջերում, այսօր օգնում է ուսուցիչներին սովորեցնելու, իսկ աշակերտներին՝ սովորելու և մեծ մասամբ ներկայացվում է բուրգի տեսքով, քանի որ յուրաքանչյուր մակարդակ կախված է նախորդ մակարդակի ձեռքբերումից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աբովյանը չէր տարանջատում իր լուսավորական-մանկավարժական գործունեությունը հայրենափրկության առաքելությունից և կրթված սերնդի, բարոյական և գիտելիքներով զինված մանկավարժի և ընտանիքի հոր ու մոր հետ էր նաև կապում ազգային ինքնաճանաչողության և վերածնության իր ծրագրերը: Ավելին, Աբովյանը դեռևս XIX դարի առաջին կեսին հայ իրականության մեջ առաջինն է բերում դասավանդման մեթոդների փոխներգործուն համակարգի էատարրեր, որ XX դարի վերջին ինտերակտիվ ուսուցում անվանումով տիրապետող են դառնում հայկական իրականության կրթահամա-կարգում: Աբովյանի վեպը այսօր ևս պահպանում է ուսուցողական-ճանաչողական նշանակությունը և հնարավոր է կիրառել անձի զարգացման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբովյան Խ. (1948). Երկերի լիակատար ժողովածու *(1),* Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.

Աբովյան Խ. (1947). Երկերի լիակատար ժողովածու *(4),* Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.

Աբովյան Խ. (1956). Երկերի լիակատար ժողովածու *(7),* Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.

Բազյան Ս. (1966). Աբովյանի գրական ժառանգությունը, Երևան., ԵՊՀ հրատ.

Զարյան Ռ. (1939). Աբովյանի կյանքը. համառոտ ակնարկ, Երևան, Հայպետհրատ.

Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին (1941). *(կազմեց և ներածականը գրեց Հրայր Մուրադյանը)* Երևան, Արմֆանի հրատ.

Խուդոյան Ս. (1941). *Խ. Աբովյանը մանկավարժ*, Երևան, Հայպետհրատ.

***Կոմենսկի* Յ.Ա.** (*1962). Մեծ դիդակտիկա*, Երևան, Հայպետմանկուսհրատ.

Հայոց գրականության պատմություն (2015). *(3),* Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.

Մուրադյան Հ. (1963). Խաչատուր Աբովյան, Երևան,Հայպետհրատ.

Մուրադյան Ն. (1979). Խաչատուր Աբովյանի պոետիկան, Երևան, «Սովետական գրող» հրատ.

Ռուսո Ժ.-Ժ. (1960). Էմիլ կամ դաստիարակության մասին *(1),* Երևան, Հայպետհրատ.

Սողոյան Ա. (2019). Խաչատուր Աբովյանը մանկագիր. պատումի առանձնահատկությունները «Պատմություն Տիգրանի...» վեպում, Բանբեր Երևանի համալսարանի, հմ. 3, էջ 14-25:

https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy

https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A5%D5%B6%D5%BB%D5%A1%D5%B4%D5%AB%D5%B6_%D4%B2%D5%AC%D5%B8%D6%82%D5%B4

REFERENCE LIST

Abovyan KH. (1948). Yerkeri liakatar zhoghovatsu *(Complete collection of works), (1),* Yerevan, HSSRR GA hrat.

Abovyan KH. (1947). Yerkeri liakatar zhoghovatsu *(Complete collection of works),* (4), Yerevan, HSSRR GA hrat.

Abovyan KH. (1956). Yerkeri liakatar zhoghovatsu *(Complete collection of works),* (7), Yerevan, HSSRR GA hrat.

Bazyan S. (1966). Abovyani grakan zharrangut'yuny *(Abovyan's literary legacy),* Yerevan, YePH hrat.

Zaryan R. (1939). Abovyani kyank'y. hamarrot aknark *(Abovyan's life. a brief overview),* Yerevan, Haypethrat.

Zhamanakakits'nery Khach'atur Abovyani masin (1941) *(Contemporaries about Khachatur Abovyan).* kazmets' yev neratsakannery grets' Hrayr Muradyany, Yerevan, Armfani hrat.

Khudoyan S. (1941). KH. Abovyany mankavarzh *(Kh. Abovyan is a pedagogue),* Yerevan, Haypethrat.

Komenski Y.A. (1962). Mets didaktika *(Great didactics),* Yerevan, Haypetmankushrat.

Hayots' grakanut'yan patmut'yun (2015). *(History of Armenian literature),* (3), Yerevan, HH GAA «Gitut'yun hrat.

Muradyan H. (1963). Khach'atur Abovyan *(Khachatur Abovian),* Yerevan,Haypethrat.

Muradyan N. (1979). Khach'atur Abovyani poyetikan *(The poetics of Khachatur Abovyan),* Yerevan, «Sovetakan groghե hrat.

Rruso ZH.-ZH. (1960). Emil kam dastiarakut'yan masin *(Emil or about upbringing), (1),* Yerevan, Haypethrat,

Soghoyan A. (2019). Khach'atur Abovyany mankagir. patumi arrandznahatkut'yunnery «Patmut'yun Tigrani...vepum *(Khachatur Abovyan is a children's writer. features of the story in the novel "History of Tigran...),* Banber Yerevani hamalsarani, hm. 3, ej 14-25.

ABSTRACT

NEW ATTEMPT TO READ WORK "THE HISTORY OF TIGRAN OR MORAL INSTRUCTIONS FOR ARMENIAN CHILDREN"

MNATSAKANYAN YE.

The article examines the novel of the great enlightener and pedagogue Khachatur Abovyan "The History of Tigran or Moral Instructions for Armenian Children" written during the last years of his life, and also touches upon his pedagogical and educational views, methodology, the concept of the formation of a new intelligentsia, new Rousseauism, the concept of the activities of an intellectual-pedagogue, the images of the novel and the typology.

The objective of the article is to reveal the content and functional significance of the work by comparing the methods used in the 21st century.

The purpose of the article is to emphasize the fact that Abovyan's novel up to this day has retained its educational and cognitive significance and can be used in the process of the development of a person. When conducting historical analysis, we have used comparative-historical, comparative, as well as analytical methods.

So, Abovyan, since in the first half of the 19th century, was the first to introduce the elements of a system of interactive teaching methods into the Armenian reality, which by the end of the 20th century started dominating in the educational system of the Armenian reality under the name of interactive teaching.

Keywords: Kh. Abovyan, Zh.-Zh. Rousseau, Tigran, Vahanyan, pedagogical novel, upbringing, interactive teaching methods, educational system, personality development, national revival.

РЕЗЮМЕ

НОВАЯ ПОПЫТКА ПРОЧТЕНИЯ ПРОИЗВЕДЕНИЯ «ИСТОРИЯ ТИГРАНА, ИЛИ НРАВСТВЕННЫЕ НАСТАВЛЕНИЯ ДЛЯ АРМЯНСКИХ ДЕТЕЙ»

МНАЦАКАНЯН Е.

В статье рассмотрен роман великого просветителя и педагога Хачатура Абовяна «История Тиграна или нравственные наставления для армянских детей», написанный в последние годы его жизни, а также затронуты его педагогические и просветительские взгляды, методология, концепция формирования новой интеллигенции, нового руссоизма, концепция деятельности интеллигента-педагога, образы романа, типология.

Хачатур Абовян, создав в своем педагогическом романе образы Тиграна и Анны, которые выбирают в качестве учителя для своих детей умудренного опытом и энциклопедически образованного Карапета Ваганяна, привносит в литературу проблему обязательства родителей и учителей в деле обучения и воспитания молодого поколения, а также демонстрирует посредством героев романа и ряда проблем, с которыми они сталкиваются, посредством образных примеров принципы и методы физического, интеллектуального и нравственного воспитания в изображаемой им действительности.

Задача статьи – раскрыть содержательное и функциональное значение произведения путем сравнения методов, применяемых в XXI веке.

Цель статьи - подчеркнуть тот факт, что роман Абовяна и по сей день сохраняет свое обучающе-познавательное значение и может быть использован в процессе развития личности. При проведении исторического анализа нами использованы сравнительно-исторический, сопоставительный, аналитический методы.

Абовян еще в первой половине XIX века первым привнес в армянскую действительность элементы системы интерактивных методов обучения, которые к концу XX в. под названием интерактивного обучения стали доминировать в образовательной системе армянской действительности.

Ключевые слова: Х. Абовян, Ж.-Ж. Руссо, Тигран, Ваганян, педагогический роман, педагогика, интерактивные методы обучения, система образования, развитие личности, национальное возрождение.